ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման վերաբերյալ

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).**

Արտադպրոցական կրթությունն ու դաստիարակությունը պետք է կարգավորվի օրենքով, որը հնարավորություն կտա կանոնակարգել ոլորտի հիմնախնդիրները, ապահովել համակարգի զարգացումը: Օրենքով պետք է կարգավորվի համակարգի բովանդակության, գործունեության և զարգացման իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին, 2-րդ պարբերություններից, «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրից» բխող գործողությունների ծրագրի 3-րդ գլխի 72-րդ կետի, 75-րդ կետի, 76-րդ կետի 2-րդ ենթակետի, 5-րդ գլխի 79-րդ կետի, 80-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված 6-րդ կետի «դ» և «ե» ենթակետերի, 81-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» ենթակետով սահմանված և «2050 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ծրագրի «ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԻ ՄԵԳԱՆՊԱՏԱԿՆԵՐԻ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «1. ԿԻՐԹ ԵՎ ԿԱՐՈՂՈՒՆԱԿ ՔԱՂԱՔԱՑԻ, ԺՈՂՈՎՈՒՐԴ» համար 1 մեգանպատակի թիրախային արդյունքի ցուցանիշի ապահովման պահանջներից:

2. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

ՀՀ-ում արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատությունների ցանցը ձևավորվել է դեռս խորհրդային իշխանության տարիներին, սակայն առ այսօր որևէ օրենքով սահմանված չէ «արտադպրոցական ուսումնական հաստատություն» և «արտադպրոցական կրթադաստիարակչական ծրագիր» հասկացությունները:

Ըստ վիճակագրության 2021/2022 ուսումնական տարում հանրապետությունում գործել են երաժշտական, արվեստի, գեղարվեստի և մանկապատանեկան ստեղծագործական 240 դպրոց և կենտրոն, որոնցից 50-ը ք. Երևանում, իսկ մնացած 190-ը՝ ՀՀ մարզերում:

2021/2022 ուսումնական տարում երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներում և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններում սովորել է 48 823 աշակերտ:

Ըստ վիճակագրության 2021/2022 ուսումնական տարում հանրապետությունում գործել է 174 սպորտային կազմակերպություն: Ք. Երևանում գործող սպորտային կազմակերպություններից 12-ը գտնվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, 39-ը՝ Երևանի քաղաքապետարանի, 3-ը գտնվել են վարչական շրջանների, 6-ը՝ «Հայաստան» մարզական միության, և 2-ը՝ «Աշխատանքային ռեզերվներ» մարզական հասարակական կազմակերպության ենթակայությամբ: *Սպորտային կազմակերպություններում մարզվել է 42 980 մարզիկ, նրանցից 7516-ը՝ կանայք:*

2017-2022թթ. արտադպրոցական ուսումնական հաստատությունների քանակի և դրանցում ընգրկված երեխաների թվի դինամիկան տրված է աղյուսակ 1-ում և աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 1. Արտադպրոցական ուսումնական հաստատությունների քանակի և դրանցում երեխաների հաճախումների զարգացման միտումները:

Տարեթիվը	Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների թիվը	Հաճախող երեխաների թիվը
2017	224	49309
2018	225	48429
2019	245	53063
2020	246	54599
2021	243	48062
2022	240	48823

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության

Աղյուսակ 2. Սպորտային կազմակերպությունների քանակի և դրանցում մարզիկների թվաքանակի զարգացման միտումները:

Տարեթիվը	Սպորտային կազմակերպությունների թիվը	Մարզիկների թիվը
2017	174	42761
2018	175	42529
2019	175	42136
2020	175	40934
2021	174	42980

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության

Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի (գործող օրենքի) արտադպրոցական դաստիարակությունն իրականացվում է մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցների, ակումբների, պատանի հայրենասերների, տեխնիկների, բնասերների և տուրիստական կայանների, մարզադպրոցների, առողջարարական ճամբարների և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող այլ կազմակերպությունների միջոցով:

Ուսուցումը ուսումնական հաստատություններում իրականացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված համապատասխան ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններով, որոնք իրենց մեջ ներառում են ուսուցանվելիք առարկաների ցանկը, դրանցից յուրաքանչյուրի համար նախատեսված դասաժամերի նվազագույն քանակը, որը պարտադիր է տվյալ տարվա ստուգարքներին և ավարտական քննություններին մասնակցելու համար:

Մանկավարժական աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ըստ մասնագիտության ունեն անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:

<u>Արտադպրոցական ուսումնական հաստատություններում աշխատող կադրերը.</u>

2021/2022 ուսումնական տարում երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներում և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններում դասավանդել են **5099 ուսուցիչներ (76.8%-ը՝ կանայք),** որոնց 42.6%-ն ունեցել է միջին մասնագիտական կրթություն:

Սպորտային կազմակերպություններում մարզումներն իրականացրել են 2104 մարզիչ-մանկավարժներ, նրանցից 324-ը կանայք (15.4%):

Նախ պետք է նշել, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով (գործող օրենքի) արտադպրոցական դաստիարակությունն իրականացնող կազմակերպությունների անվանումներն ու տերմիններն արդեն իսկ հնացած են:

Հարկ է նշել նաև, որ առ այսօր որևէ իրավական ակտով սահմանված չէ արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկն ու նկարագիրը, իսկ մանկավարժների ոչ միայն մասնագիտական պատրաստվածությամբ, այլև գործառույթների հստակ սահմանմամբ է պայմանավորված, թե ինչպիսի կարողունակություններով պիտի օժտված լինի անձը՝ հաստատություններում կրթության կազմակերպման արդյունքում կարողունակ քաղաքացիներ ձևավորելու համար:

Հայաստանում մանկավարժի մասնագիտության հետ կապված կան մի շարք մարտահրավերներ, մասնավորապես՝ աշխատանքի ընդունման, մասնագիտական զարգացման և ցածր վարձատրության հետ, որը էապես ազդել է ինչպես դպրոցներում, այնպես էլ արտադպրոցական ուսումնական հաստատություններում դասավանդման որակի վրա և ընդհանուր առմամբ նվազեցրել մասնագիտության գրավչությունը:

Մանկվարժների ցածր աշխատավարձը խոչընդոտում է նաև նոր մասնագետների՝ համակարգ մուտք գործելուն: Այս ամենը բացասական ազդեցություն է ունեցել նաև արտադպրոցական կրթության և դաստիարակության ոլորտի վրա, ինչը հնարավոր է շտկել ֆինանսական ներդրումների շնորհիվ:

Առկա վիճակը և ներկա խնդիրները գնահատելու համար հիմք են ընդունվել ինչպես գործող իրավական ակտերի վերլուծությունները, այնպես էլ ոլորտը բնութագրող վիճակագրական ցուցանիշները:

Արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատությունների ֆինասավորումը.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2145-Ն որոշմամբ ընդունվեց «Հայաստանի Հանրապետության պետական արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը:

Արտադպրոցական ոլորտը ֆինանսավորելու նպատակով, որպես հաշվարկային միավոր ընդունվեց տարեկան լրակազմի միջին չափանիշը՝ մեկ երեխա, հնարավորություն ընձեռվեց ունենալ արտաբյուջետային հաշիվներ:

1996 թվականին Հայաստանի Հանրապետությունում ձևավորվեց վարչատարածքային կառավարման նոր համակարգ և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ արտադպրոցական ուսումնական հաստատությունների **մոտ 80%-ը հանձնվեցին համայքներին**:

Արտադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային (ըստ ենթակայության) բյուջեով նախատեսված միջոցների հաշվին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ լրացուցիչ աղբյուրներից:

Ներկայումս գործող ֆինանսավորման բանաձևը հնարավորություն չի տալիս գործընթացն իրականացնել նույն սկզբունքով և այս ոլորտում չի ապահովում տեղական, մարզային, պետական մարմինների ինչպես նաև միջգերատեսչական համագործակցության բարելավումը, պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի թափանցիկության ապահովումը:

Արտադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման համար անհրաժեշտ է կիրառել միասնական մոտեցում՝ հնարավորինս ստույգ հաշվարկել ֆինանսավորումը յուրաքանչյուր անհատական դեպքի համար:

3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Նախագծով առաջարկվող փոփոխություններով հնարավոր կլինի

1) սահմանել այն հիմնական դրույթները, նպատակները, խնդիրներն ու զարգացման ուղիները, որոնք համընդհանուր են արտադպրոցական կրթության և դաստիարակության ոլորտում նոր որակական նախադրյալներ ստեղծելու հիմքում,
2) նպաստել մատուցվող ծառայությունների որակի և մատչելիության բարելավմանը**, որի ապահովումը ենթադրում է՝**

- **ոլորտի կադրային համալրում**, **զարգացնող միջավայրի ստեղծում, ինքակրթություն, փորձի փոխանակում:** Ուսուցման գործընթացի արդյունավետությունը կախված է նրանից, թե որքանով է մանկավարժը կարողունակ համապատասխան գործընթացի պլանավորման, կազմակերպման, գիտելիքների փոխանցման հարցերում: Մանկավարժական գործունեությունը մանկավարժից պահանջում է գիտելիքների և մասնագիտական կարողությունների անընդհատ

զարգացում: Հատկապես այդ խնդրի լուծմանն է ուղղված մանկավարժի պաշտոնի նկարագիրը, որը, որպես ուղղորդիչ կարգավորում, կոչված է նպաստելու Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած կրթական քաղաքականության իրականացմանը՝ կրթության բարեփոխման շրջանակներում: Հայաստանում մանկավարժների, այդ թվում՝ արտադպրոցական ուսումնական հաստատություններում աշխատող մանկավարժների ցածր աշխատավարձը խոչընդոտում է մարդկային լավագույն կապիտալի՝ այդ թվում՝ արական սեռի մասնագետների մուտքը ոլորտ և գործող վերջիններիս չի մղում մասնագիտական զարգացման: Սա հանգեցնում է շարունակական արատավոր շղթայի, երբ ցածր վարձատրվող մանկավարժները հաճախ թերանում են իրենց աշխատանքում, իսկ առաջխաղացման և մասնագիտական աճի ներկայիս համակարգը չի նպաստում, որ վերջիններս ձգտեն և կարողանան հասնել կատարելագործման: Այս խնդիրը լուծելու նպատակով պետք է մշակվի արդյունքի վրա հիմնված մանկավարժների կամավոր ատեստավորման կարգ, որը հնարավորություն կտա հավելավճարի տեսքով աշխատավարձի բարելավմանը:

Համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի թիվ 196-Ն որոշմամբ հաստատված Հավելվածի 17-րդ կետի 2-րդ ենթակետի՝ արտադպրոցական ուսումնական հաստատություններում մանկավարժներեը կարող են դասավանդել շաբաթական 24 ժամ, որը համարժեք է 1 դրույքի: Ըստ այդմ՝ արտադպրոցական ուսումնական հաստատություններում աշխատող մանկավարժի մեկ դրույքի համար հաշվարկվում է 132 276 հազար ՀՀ դրամ աշխատավարձ:

Առաջարկվող նախագծի ընդունման արդյուքնում համապատասխան կարգի գործարկմամբ արտադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողները կարող են իրենց նախաձեռնությամբ մասնակցել տվյալ ուղղությամբ գիտելիքների իմացության աստիճանի գնահատման գործընթացին և դրա արդյունքով ստանալ 30-ից մինչև 50 % հավելավճար:

- **Ֆինանսատնտեսագիտական պայմաններ՝** պետության կողմից երաշխավորված ֆինանսավորում՝ նոր մեխանիզմների ներդրմամբ,
- **ուսումնական գործընթացի և օրենսդրության կատարելագործում՝** կարգերի, ուսումնական պլանների, ծրագրերի մշակմամբ և լրամշակմամբ: Անհրաժեշտ է ուսուցման գործընթացը համապատասխանեցնել ժամանակակից պահանջներին:

4. Կարգավորման առարկան.

Նախագծով կարգավորվում է արտադպրոցական կրթության և դաստիարակության կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները, մանկավարժական կազմին ներկայացվող պահանջների, նրանց կամավոր ատեստավորման պայմանների, պետական ֆինանսավորման և վերահսկողության հետ կապված հարաբերությունները:

5. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.

Առաջարկվող լրացումները նշված ուղղություններով թույլ կտան մեծացնելու համակարգի գործառնության արդյունավետությունը, խրախուսելու համակարգի զարգացման հնարավորությունները, ապահովելու և

զարգացնելու մանկավարժների մասնագիտական կատարելագործման շարունակականությունը, կատարելագործելու ուսումնական հաստատությունների կառավարման մեխանիզմները:

Իրավական ակտի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն: